## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**2007թ. ՄԱՅԻՍԻ 31-Ի ՍԴԱՈ-71 ԵՎ 2007թ. ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ՍԴԱՈ-86 ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «2007 թվականի մարտի 19-ին Մեղրիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու եւ շահագործելու բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում» եւ «2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ մաքսային բնագավառում համագործակցության եւ փոխադարձ աջակցության մասին համաձայնագրում» ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերի դատաքննությունն սկսել 2007թ. հուլիսի 10-ին:

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած համարել համապատասխանաբար՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. մայիսի 31-ի ՍԴԱՈ-71 եւ 2007թ. հունիսի 13-ի ՍԴԱՈ-86 աշխատակարգային որոշումների 2-րդ կետերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ** **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 հունիսի 2007 թվականի
ՍԴԱՈ -91